ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ
Մասնակիցների ընդհանուր ժողովի

«07» հոկտեմբերի 2025թ.

թիվ 05/2025 որոշմամբ

Մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահ՝

Դավիթ Հարությունյան

Կ Ա Ր Գ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ

Ուժի մեջ է՝ 2025թ-ի հոկտեմբերի «07»-ից

ԲԱԺԻՆ Ի. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Արժեթղթերի տեղաբաշխման կարգը սահմանում է Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի կողմից արժեթուղթ թողարկող ընկերությունների արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման գործընթացը համաձայն ՀՀ օրենսդրության:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Արժեթղթերի տեղաբաշխման կարգի պահանջները տարածվում են նկարագրվող գործառույթներում ներգրավված Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի աշխատողների վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3. Արժեթղթերի տեղաբաշխման կարգը մշակված է ՀՀ Օրենսդրության և ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
4. Արժեթղթերի տեղաբաշխման կարգն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
   1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենք (փոփոխություններով):
   2) Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ Մասնակիցների ընդհանուր ժողովի 2025 թվականի ապրիլի 1-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «Ներդրումային քաղաքականություն»:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5. Արժեթղթերի տեղաբաշխման կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) Ընկերություն՝ Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ:
   2) Արժեթուղթ՝ բաժնետոմս կամ պարտատոմս:
   3) Լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
   4) Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

5) Կարգ՝ Ընկերության «Արժեթղթերի տեղաբաշխման կարգ»:
6) ՀԿԴ՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ:
7) ՀՖԲ՝ Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ:
8) Թողարկող՝ իրավաբանական անձ, որը ՀՀ օրենսդրության համաձայն իրականացնում է արժեթղթերի թողարկում և տեղաբաշխում:
9) ազդագիր՝ Թողարկողի և Թողարկողի կողմից թողարկվող Արժեթղթերի վերաբերյալ Օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է Արժեթղթերի հրապարակային առաջարկ:
10) դեպո հաշիվ՝ արժեթղթերի հաշվառման համար նախատեսված պահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:

ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Կարգը սահմանում է Ընկերությունում Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացում՝
1) Ընկերության կառավարման մարմինների գործառույթները,
2) Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացում ընդգրկված այլ աշխատողների գործառույթները և պարտականությունները,
3) Կարգի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը և ներքին աուդիտի իրականացումը:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

7. Ընկերության Մասնակիցների ընդհանուր ժողովը՝
1) սահմանում է Ընկերության ներդրումային քաղաքականությունը,
2) հաստատում է Ընկերության Գործարար ծրագիրը, դրա կատարման հաշվետվությունները, հսկողություն է իրականացնում ծրագրի իրագործման նկատմամբ,
3) քննարկում և հաստատում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից ներկայացված Արժեթղթերի տեղաբաշխման առաջարկները,
4) իրականացնում է Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

8. Ընկերության գործադիր տնօրենը՝

1) կոորդինացնում է Վերլուծաբանների խմբի աշխատանքը պոտենցիալ Թողարկողների ընտրության ուղղությամբ,
2) իրականացնում է պոտենցիալ Թողարկողների հետ նախնական բանակցություններ Արժեթղթերի հնարավոր թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ
3) իրականցնում է հանդիպումներ պոտենցիալ ներդրողների հետ, բացահայտում է հնարավոր թողարկվելիք Արժեթղթի նկատմամբ պահանջարկը:
4) Արժեթղթի տեղաբաշխման վերաբերյալ առաջարկը ներկայացնում է Ընկերության Մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանը, ընդ որում նախաձեռնությունը կարող է դրսևորվել նաև պոտենցիալ Թողարկողի կողմից,
5) կնքում է Արժեթղթի տեղաբաշխման պայմանագիր Թողարկողի հետ,
6) կոորդինացնում է Վերլուծաբանների խմբի կողմից Ազդագրի պատրաստման և Լիազոր մարմին հաստատման ներկայացման աշխատանքները,
7) Լիազոր մարմնի կողմից Ազդագրի հաստատումից հետո կազմակերպում է հանդիպումներ պոտենցիալ ներդրողների հետ, ներկայացնում Արժեթղթի և տեղաբաշխման պայմանները:
8) Թողարկողի հետ համատեղ իրականացնում է տեղաբաշխվելիք Արժեթղթի ճանաչվելիության բարձրացմանը ուղղված մարքեթինգային միջոցառումների ծրագիր, իրականացնում է Արժեթղթի հրապարակային առաջարկ:
9) անհրաժեշտության դեպքում կազմակերպում է Արժեթղթի տեղաբաշխումը ՀՖԲ-ի համապատասխան հարթակում:
10) անհրաժեշտության դեպքում կազմակերպում է տեղաբաշխված Արժեթղթի փոխանցումը ՀԿԴ-ում կամ այլ դեպոզիտարիայում սպասարկվող ներդրողների դեպո հաշիվներին,
11) Թողարկողի հետ համաձայնության դեպքում վերջինիս հետ կնքում է շուկա ստեղծողի պայմանագիր,
12) ապահովում է Օրենքի, Կարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,
13) իրականացնում է Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 3. ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԻ ԽՄԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վերլուծաբանների խումբը գործադիր տնօրենին ներկայացնում է պոտենցիալ Թողարկողների վերաբերյալ առաջարկներ համաձայն Տարեկան աշխատանքային ծրագրի, որոնք առնվազն ներառում են
    1) ՀՀ արժեթղթերի շուկայի ընթացիկ վիճակը,
    2) պոտենցիալ Թողարկողի ֆինանսական վիճակի վերլուծություն, հիմնված վերջին երեք տարվա հրապարակված ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև Թողարկողի վերաբերյալ առկա այլ տեղեկությունների վրա,
    3) պոտենցիալ Թողարկողի վերաբերյալ ոչ շուկայական տեղեկատվություն, այդ թվում բաժնետերերի և գործադիր մարմնի ղեկավարների վերաբերյալ,
    4) ֆինանսական և ոչ ֆինանսական հնարավոր ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն
    5) հնարավոր թողարկվելիք Արժեթղթի էական պայմանների վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում Արժեթղթի տեսակ, Արժեթղթի ժամկետ (առկայության դեպքում), արժեկտրոնի տոկոսադրույքի միջակայք (առկայության դեպքում), արժեկտրոնի վճարման պարբերականություն (առկայության դեպքում), տեղաբաշխման գին, Ընկերության և Ընկերության հետ փոխկապակցված անձանց կողմից Արժեթղթի ձեռքբերման առավելագույն ծավալ և այլն,
    6) հնարավոր թողարկվելիք Արժեթղթի տեղաբաշխման էական պայմանների վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում լավագույն ջանքերի (best efforts) կամ հաստատուն պարտավորության (firm commitment) տարբերակների, տեղաբաշխման ձևի և հարթակի վերաբերյալ,
    7) անհրաժեշտության դեպքում պատրաստում է արժեթղթերի փոխանցման համապատասխան հանձնարարականներ՝ տեղաբաշխված Արժեթուղթը ՀԿԴ-ում կամ այլ դեպոզիտարիայում սպասարկվող ներդրողների դեպո հաշիվներին փոխանցելու նպատակով:

ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

10. Կարգով սահմանված գործառույթները/քայլերը իր ստորաբաժանումում կազմակերպելու և ապահովելու համար պատասխանատվություն է կրում Վերլուծաբանների խմբի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Ընկերությունում Արժեթղթի տեղաբաշխման գործառույթների համակարգման և դրանց պատշաճ իրականացման նկատմամբ ընթացիկ հսկողության պատասխանատու է հանդիսանում գործադիր տնօրենը: Կարգով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի ծառայությունը: